ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ԿԱՄՈՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻՍՏԻ /ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ/, ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ, ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	**Թափուր պաշտոնի անվանումը**	**Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)**	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝**	**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը**
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.**Մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ)** -0.25 դրույք /33000 ՀՀ դրամ աշխատավարձ) 2.**Դաստիարակ** -1,17 դրույք /154440 ՀՀ դրամ աշխատավարձ/ 3.**Երաժշտության ղեկավար**-0.5 դրույք /66000 ՀՀ դրամ աշխատավարձ/:	1) **Որակավորման պահանջները** 1.Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը ուսումնական գծով տնօրենի տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։ 2. Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։ 3.Երաժշտության ղեկավարի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց)։ 2) **Ընդհանրական պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի /տնօրենի ուսումնական գծով տեղակալը/ պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար։	1) դիմում (Ձև 1). 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ). 3) անձը հաստատող փաստաթուղթ. 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում). 5) ինքնակենսագրություն (Ձև 4). 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի. 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման

		հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:		վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
		Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
2	**Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը**	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
	Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կամո, 1 փողոց շենք 14 /մանկապարտեզ/ **Օրը՝ 2026 թվականի փետրվարի 11-ին** **ժամը՝ 12:00**	Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կամո, 1 փողոց շենք 14 /մանկապարտեզ/ **Հեռ. 093 889 321** **Էլ. հասցե՝ kamomankapartez@mail.ru** **Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:** **Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:**		**2026 թվականի հունվարի 09-ից մինչև 2026 թվականի փետրվարի 6-ը ներառյալ**
		Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից: **Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում:**		